

Երեւանի մամուլի ակումբի՝ 1997-1998թթ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1997թ. հունվարի 1-ից մինչև 1998թ. դեկտեմբերի 31-ը ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 1997թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ 2.403.127 դրամ 26 լուման, կազմել է 38.573.518 դրամ 30 լումա եւ 3.129 ԱՄՆ դոլար 45 ցենտ:

Դրանից. անձնական ներդրումներ՝ 16.030 դրամ, ԵՄԱ անդամների անդամավճարներ՝ 418.000 դրամ, ԱՄՆ կառավարության շնորհա•ումարը (ԱՄՆ տեղեկատվական ծառայության միջոցով)՝ 5.717.250 դրամ, «Եվրասիա» հիմնադրամի շնորհագումարները՝ 21.256.449 դրամ 04 լումա եւ 524 ԱՄՆ դոլար, ԱՄՆ եւ Եվրամիության մրցանակը՝ 8.762.661 դրամ 96 լումա եւ 2.605 ԱՄՆ դոլար 45 ցենտ:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է 36.388.645 դրամ 71 լումա, որից

1. Աշխատավարձի եւ հոնորարների համար ծախսվել է 10©592©870 դրամ« 55 լումա:
2. Աշխատավարձի հարկերը եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 6.643.536 դրամ 02 լումա:
3. Որպես հիմնական միջոցների հարկ մուծվել է 10.645 դրամ:
4. Բանկային ծառայությունների համար մուծվել է՝ 107.732 դրամ, 70 լումա:
5. ԵՄԱ ամենամյա մրցանակ՝ 5 հաղթողներին. 342.285 դրամ:
6. Ներկայացուցչական ծախսերը կազմել են 496.025 դրամ, որից 326.000 դրամ ծախսվել է ԵՄԱ խորհրդանշանով գրենական պիտույքներ եւ վերնաշապիկներ պատրաստելու համար:
7. Գրասենյակի կահավորման համար ծախսվել է 437.946 դրամ:
8. Գրասենյակային, գրենական պիտույքների, թղթի եւ ԵՄԱ տեղեկագրի բազմացման համար ծախսերը կազմել են 4.040.526 դրամ, 78 լումա:
9. Ծառայությունների համար (ԵՄԱ տեղեկագրի շարվածք, էջադրում) վճարվել է 3.790.884 դրամ, 97 լումա:
10. Արտագնա միջոցառումների համար ծախսվել է 572.000 դրամ, որից 96.000 դրամ կազմել են ավտոտրանսպորտի ծախսերը, մնացած 476.000 դրամը՝ միջոցառումների մասնակիցների սննդի եւ ապրելու վարձը:
11. 186.710 դրամ են կազմել հյուրերի հյուրանոցային եւ ԵՄԱ աշխատակիցների գործուղման ծախսերը:
12. Հաղորդակցության եւ փոստային ծախսերը կազմել են 2.329.305 դրամ, 95 լումա:
13. Գրասենյակային սարքավորումների եւ ցածր արժեք ունեցող գույքի վրա ծախսվել է 4.745.413 դրամ 44 լումա, որից ցածր արժեք ունեցող գույքի արժեքը կազմել է 59.646 դրամ 42 լումա:
14. 5.000 դրամ՝ մուտքի անդամավճարի վերադարձ:
15. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում որպես նյութական օգնություն հատկացվել է 181.000 դրամ:
16. Պարբերական հրատարակությունների գնման համար ծախսվել է 343.715 դրամ:
17. «Կլոր սեղանների», մամուլի ասուլիսների կազմակերպման համար ծախսվել է 248.838 դրամ:

18. Տրանսպորտային ծախսերը կազմել են 7.043 դրամ:

19. Երեւանի մամուլի ակումբի երրորդ տարելիցի տոնակատարության համար ծախսվել է 585.940 դրամ, որից 64.000 դրամ ծախսվել է ավտոտրանսպորտի եւ 521.940 դրամ՝ ընդունելության կազմակերպման համար:

20. 5.500 դրամ է կազմել կնիքի եւ դրոշմակնիքի պատրաստումը:

Շնորհատու կազմակերպությունների պահանջի համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտներն ու ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում: 1999թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է 2.184.872 դրամ 59 լումա եւ 3.129 ԱՄՆ դոլար 45 ցենտ:

Մույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: